ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2015 թվականի թիվ 159 - Ա

ԿԱՐԵՆ ՀԱՅԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի դ/ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. հունիսի 13-ի՝ «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 70-3.1-11/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. օգոստոսի 20-ի N 5 որոշումը և Կարեն Նազարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Կարեն Հայկի Նազարյանին 2015 թվականի օգոստոսի 24-ից երեք ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 70-3.1-13/ թափուր պաշտոնում:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանել դրույքաչափ՝ առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի (2.66) կիրառմամբ՝ 175932 / հարյուր յոթանասունհինգ հազար ինն հարյուր երեսուներկու/ դրամ:

2. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» թիվ 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ հոդվածի ա/ ենթակետի համաձայն՝ ուժը կորցրած ճանաչել Կ.Նազարյանի հետ 04.09.2014թ. կնքած թիվ 9 ժամկետային աշխատանքային պայմանագիրը և ՀՀ Տավուշի մարզպետի 04.09.2014թ. թիվ 112-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. օգոստոսի 24
ք.Իջևան